կոսն՝ վասն տանելոյ իմ յՕշական աւան զնորակերտ խաչն, յորում մասն նշխարաց Ս. Մեսրովբայ Թարգմանչի և օծանելոյ պայն խաչն, նա և զկնդակն մեծագրիւ՝ որով կաթուղիկոսն տնօրինէ և պատուիրէ քահանայից Օշականայ ի հանդիսաւոր աւուրս այն ս. խաչին կատարել զխաչահանդիսս, յաւուր տոնի Ս. Մեսրովբայ չնորհեաց ինձ ի պարգեւ զմիտաքսեայ ծաղկեայ փիլոնն իւր[1]):

ԻԵ. Ի 1882 *ամի, ըստ կանխագոյն հաճութեան Տ. Գէորգ կաթուղիկոսի, գրութեամբ Սինոդի ի* 23-*ն յունվարի հմր.* 124, *կարգեցաւ նախագահ վանքական կառավարութեան Ս. Էջմիածնի։*

ԻԶ. Ի 1885 *ամի, յամսեանն ապրիլի* 21, *գոլով անդամ Սինոդի՝ ձայնատու անդամ եղէ ժողովոյն ընտրութեան Տ. Մակար կաթուղիկոսի և ի նոյն ամի, յամսեանն նոյեմբերի* 10, *հանդիսակից* 11 *եպիսկոպոսաց ի ժամ Օծութեան Նորին Վեհափառութեան, և ի ժամ օծմանն ի վերայ աւազ սեղանոյ տաճարի Ս. Էջմիածնի՝ պատշաճաւոր առենաբանութեամբ չնորհաւորեցի զօծումն կաթուղիկոսի ի հայրապետութիւն ամենայն Հայոց, որպէս գրեալ է Ararat ամսագրի նոյն* 1885 *ամի, յամսատետրին ապրիլի, յերես* 166—177 *և նոյեմբերի, յերես* 518 *և* 523։

ԻԷ. Կոնդակաւ Տ. Մակար կաթուղիկոսի ի 11 *յունվարի* 1886 *ամի,* № 26, *կարգեցայ վերատեսուչ ճեմարանի Ս. Էջմիածնի։*

ԻԸ. Ըստ հրամանի Սինոդի ի 27 *ապրիլի* 1887 *ամի հմր.* 1339, *գնալով ի Կարս քաղաքն, բայի և բարեկարգեցի գո-*

---

[1]) Ծանուն Ս. Մեսրովբայ Թարգմանչի եկեղեցին, որ յՕշական, յամին 1875—1880 վայելուչ ձեւով նոր չինել տուեց Տ Գէորգ կաթուղիկոսն՝ աշխատութեամբ իմով եւ Նայի Ա. քահանայի Ամատունւոյ և պ. Մկրտչի Մօրիկեանց։